Մարինե Մինասյան

ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ ՀՈՎՍԵՓ ԿԱՐԱԼՅԱՆԻ ԵՎ ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ՄՏԵՐՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Նկարիչ, կինոռեժիսյոր, տաղանդ, համագործակցություն, ընկերություն, ստեղծագործություն, հին Թիֆլիս, էսքիզ, կինոնկար, արվեստ

Հայկական և Ուկրաինական ՍՍՀ-ների ազգային արտիստ, հանճարեղ կինոռեժիսյոր և սցենարիստ Սերգեյ Իոսիֆի Փարաջանովը (Սարգիս Հովսեփի Փարաջանյան) ծնվել է 1924 թվականի հունվարի 9-ին Թիֆլիսի հայկական ընտանիքում[1], իսկ Հայկական ՍՍՀ վաստակավոր նկարիչ (1967)[2], ԽՍՀՄ նկարիչների միության (1942) անդամ[3] թիֆլիսահայ նկարիչ Հովսեփ Արտեմի Կարալյանը (Իոսիֆ Կարալով)՝ 1897 թվականի փետրվարի 1-ին Թիֆլիսում՝ հայկական մեծ ավանդույթներ ունեցող ծառայողի ընտանիքում[4]: Տարիքային ակնհայտ մեծ տարբերությունը (27 տարի), որ գոյություն ուներ Հ. Կարալյանի և Ս. Փարաջանովի միջև, ոչ մի կերպ չէր կարող խոչընդոտել նրանց մտերմությանն ու բարեկամությանը, քանզի նրանք ընդհանուր շատ բան ունեին: Ինչպես փաստում է Կ. Ամիրխանյանը. «Կարալյանն ընկերություն է արել Փարաջանովի հետ: Նրանք ունեցել են համատեղ ստեղծագործական ծրագրեր ու մտադրություններ, թեպետ միայն հին Թիֆլիսի աշխարհն արդեն հիմք էր նրանց ընկերության համար»[5]:

Ռուսական կայսրության մեջ Անդրկովկասի երբեմնի վարչական, արդյունաբերական և մշակութային կենտրոն Թիֆլիսը երկար ժամանակ նաև հայկական մշակույթի կենտրոն էր: Հռչակավոր շատ անուններ են կապված այս քաղաքի հետ: Եվ, հավանաբար, Թիֆլիսից պետք է սկսել երկու ոչ հասարակ, տաղանդավոր մարդկանց՝ Հովսեփ Կարալյան նկարչի և Սերգեյ Փարաջանով կինոռեժիսյորի հիասքանչ ընկերության մասին շարադրանքը: Հենց հասարակ թիֆլիսցիների կյանքի նրբությունների առանձնահատուկ ընկալման համար էլ նկարչին գնահատում և նրա առջև խոնարհվում էր մեծ կինոռեժիսյոր Սերգեյ Փարաջանովը:

Հ. Կարալյանը հին Թիֆլիսի ինչ-որ յուրահատուկ ոգու պահապանն էր, և երբ իրեն հատուկ հումորի արտասովոր զգացումով սկսում էր պատմել քաղաքի ավանդույթների ու կենցաղի մասին, ապա նրան կանգնեցնելն անհնար էր. հենց այդ եռանդն էր գնահատում Փարաջանովը[6]: Նա պաշտում էր Թիֆլիսը, բայց

---

[1] Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, Եր., 1986, էջ 314:

[2] Նույնը, հ. 5, Եր., 1979, էջ 294:

[3] Տե՛ս Личная карточка члена (кандидата) Союза Советских Художников Иосифа Артемевича Каралова, Հայաստանի ազգային արխիվ, Ֆ-1352, ցուցակ-1, գործ 109:

[4] Каралова И., Мир Караляна, Ер., «Иравунк», 2009, с. 6.

[5] Տե՛ս Амирханян К., Мир Караляна, еженедельник “Эфир”, № 31 (793), Ер., 30.07.2009, с. 2:

[6] Տե՛ս Каралова И., Мир Караляна, Ер., «Иравунк», 2009, с. 43:

հետաքրքրականն այն է, որ հաղորդակցվելով Հայաստանին, նրա խստաշունչ բնությանը, վանքերին ու եկեղեցիներին՝ անընդհատ ցավում էր, որ ավելի շուտ չի շփվել «նախնիների արմատների հետ, արմատներ, որոնք գնում են հողի ընդերքը»[1]:

Ս. Փարաջանովը սիրել է շրջապատված լինել նկարիչներով: Նա հարստացել է նրանց ներկայությամբ, գործերով ու ամեատարբեր դրսևորումներով, ներշնչվել է նրանց հետ հաղորդակցվելիս, ստուգել իր հայացքները՝ հաճախ նույնիսկ չօգտվելով նրանց որոշակի ծառայություններից[2]: Բայց Հ. Կարալյանը բացառիկ էր, նրա հետ մտերմությունն այլ՝ արտասովոր երանգ ուներ: Փարաջանովն ու Կարալյանը տարբեր բնավորությունների տեր էին, բայց նրանց հարազատեցնում էր Թիֆլիսը, հայկական Վրաստանի կերպարները, Հայաստանի հանդեպ սերը, կենցաղի միանման ընկալումը և թիֆլիսահայերի կենսակերպը: Հոգիների հարազատությունն է, որ ընկած է այս երկու տաղանդավոր մարդկանց համագործակցության հիմքում[3]:

Գալով Երևան՝ Փարաջանովը պարտադիր այցելում էր Կարալյանի արվեստանոց, և նրանք զրուցելով երկար նստում էին մինչև ուշ կեսգիշեր: Նրանց հանդիպումների վկան է եղել նկարչի դուստր Իզաբելլա Կարալյանը, ով սովոր էր հյուրերի ներկայությանը: Բայց մի անգամ Հ. Կարալյանի արվեստանոցում հանդիպում է մի անծանոթի, ում մեջ միանգամից զգում է թիֆլիսցուն՝ խոսվածքը, շարժումները, բուռն արտահայտված հումորը: Այն տարիներին իր իսկ դիմանկարների տպագրությունները Փարաջանովին բավականություն չէին պատճառում, հասարակայնությունն ու մամուլը լուռ շրջանցում էին նրան: Բնականաբար, Իզաբելլան չէր էլ կարող կռահել, թե ով է նա, քանի դեռ Հ. Կարալյանը չէր ներկայացրել նրան[4]:

«Ս. Փարաջանովից ստացած առաջին տպավորությունները նման են եղել գարնանամուտի անակնկալ եղանակներին, որոնք երբեք կանխագուշակել հնարավոր չի եղել: Նրա հորդաբուխ, հուզաթաթավ մտքերը հրավառության պես լուսավորում են դիմացինի երևակայությունն ու առնում նրան իրենց տարափի մեջ: Նույնիսկ ամենաառօրեականի շուրջ խոսակցությունն անգամ այնպիսի անակնկալ ու յուրատիպ ընթացք է ստանում, որ ելակետին հանգել, առանց նրա միջնորդության, հնարավոր չէ:

Փարաջանյանի բնածին կերպարային մտածողությունը, երևույթների մեջ թափանցելու և էականը որսալու ունակությունը, շարադրանքի ու ժեստի գունեղությունը և, վերջապես, մարդկային անսահման բարությունն ու անկեղծությունը պարզապես հմայում, զինաթափում են բոլորին»[5]:

Նկարչի դստեր մոտ այդ հանդիպումները տպավորվել են նաև այն պատճառով, որ հյուրը Հ. Կարալյանին համոզել է դառնալ «Նռան գույնը» ֆիլմի նկարիչը:

---

[1] Аргутян М., Темпера цвета граната, журнал “Жам”, 2009, с. 87.

[2] Տե՛ս Явурян А., Век кино № 5. Запоздавшая премьера. Как создавался “Ашик Кериб” и как его вернули ереванскому зрителю, «Республика Армения», № 86 (1347), Ер., 30 апреля 1996, с. 4:

[3] Տե՛ս Затикян М., Экспозиция, объединившая два таланта, «Голос Армении», 24 апреля 2008, с. 7. ՀԱՊ հուշաձեռագրային բաժին, Ֆ-76, Ի-28454:

[4] Аргутян М., Темпера цвета граната, журнал “Жам”, 2009, с. 84.

[5] Ալագյոզյան Գ., Սա Փարաջանյանն է, «Սովետական Հայաստան», Եր., 06.08.1967:

Բանն այն է, որ նկարիչը չի սիրել հանձն առնել մի գործ, որն այնքան էլ լավ չի իմացել: Եվ Կարալյանն ինչպես կարողացել է, հրաժարվել է, բայց պերճախոս Փարաջանովը կրկին անգամ այցելելով նրան (այս անգամ արդեն նվերով՝ ուկրաինական ասեղնագործ վերնաշապիկով), ի վերջո կարողացել է համոզել՝ ներկայացնելով վերջնագիր՝ «Վարպե՛տ, կա՛մ դուք, կա՛մ ոչ ոք»: Կոլաժի վարպետը[1] կրկին խոսում է արտակարգ կերպով իրեն մտերիմ նկարչի և նրա ստեղծագործության հանդեպ ունեցած հարգանքի ու հիացմունքի մասին: Եվ վրձնի վարպետը հմայվելով այդ արտահայտություններով՝ սկիզբ է դնում համագործակցությանն ու մեծ ընկերությանը[2]: Այսպիսով, Կարալյանը հանձնվում է, և այդպես սկսվում է «Նռան գույնը» ֆիլմի էսքիզների վրա աշխատանքը: Կարալյանը որպես ֆիլմի նկարիչ, 1967-ի ապրիլին պատվեր է ստանում «Հայֆիլմ» կինոստուդիայից և սկսում մի կարևոր կերպարային շարք, որն այսօր ևս մեծ հետաքրքրություն է առաջացնում, և ոչ միայն հայ հանդիսատեսի շրջանում[3]: Նշված համագործակցությունը հնարավոր էր շնորհիվ այն բանի, որ ինչպես Փարաջանովի, այնպես էլ Կարալյանի ստեղծագործության գենետիկ ակունքները գնում են Արևելքի այն հզոր մշակույթի խորքերը, որը միավորում էր հայկական, պարսկական, վրացական և այլ մշակույթները[4]: Արևելյան մշակույթն անփոփոխ կերպով ծնել է այնպիսի արվեստագետներ, ինչպիսիք են Կարալյանն ու Փարաջանովը, ովքեր միանգամից ներգրվում են մի քանի մշակույթների համատեքստում, բայց իսկությամբ մնում հայ նկարիչ: Նրանք այնքա՞ն ճշգրիտ են զգում Արևելքի պլաստիկան, ռիթմերն ու ձևերը, հատկապես պարսկական մշակույթը, այնքա՞ն խորքով են կապված վերջինիս: «Ինքը՝ Փարաջանովը, իրեն համարել է հենց այդպիսի նկարիչ. եթե Փարաջանովը խոսել է ինչ-որ մեծ բանի մասին, նա ոչ թե մտաբերել է Միքելանջելոյին կամ Լեոնարդո դա Վինչիին կամ խոսել եվրոպացի նկարիչների մասին, այլ հիշել է պարսիկներին: Որովհետև պարսիկը նրա համար արտազգային հասկացություն, ավելի ստույգ՝ մշակութային կատեգորիա էր: Հիրավի, Փարաջանովը եղել է Արևելյան մարդ և դարձել Արևելքի մեծ երգիչ»[5]:

Պարսկական մշակույթը գրառումներից մեկում գովաբանել է նաև Հ. Կարալյանը. «Ես միշտ հիանում եմ Իրանի մեծ և խոր արվեստով, նրա մանրանկարչությամբ, նրա վառ ու ներդաշնակ գույներով: Այս մեծ արվեստն ազդեցություն է ունեցել մի շարք երկրների արվեստների վրա: Ինձ նույնպես դուր է գալիս Իրանի ժամանակակից արվեստը: Բայց ես աշխատում եմ իմ երկրի, իմ ժողովրդի համար և, երբ իմ արվեստն

---

[1] Տե՛ս Карапетян И., Цвет граната в эскизах, еженедельник “Эфир”, № 19, Ер., 8 мая 2008, с. 12.

[2] Տե՛ս Каралян Б., Прекрасное соседствует с добротой. Из записок об отце, элитарная газета “Новое время”, Вып. 7 (151), Ер. 31.07.2007, с. 10:

[3] Микаэлян К., Маэстро, Иосиф Каралян и «Саят-Нова», «Новое время», № 1602, Ер., 26 апреля 2008, с. 8.

[4] Տե՛ս Аргутян М., Темпера цвета граната, журнал “Жам”, 2009, с. 85:

[5] Явурян А., Век кино № 5. Запоздавшая премьера. Как создавался “Ашик Кериб” и как его вернули ереванскому зрителю, «Республика Армения», № 86 (1347), Ер.: 30 апреля 1996, с. 4.

ընդունվում է, ես մեծ բավականություն եմ ստանում: Դա ինձ աշխատելու մեծ ուժ է տալիս և ոգևորում է ավելին անելու»[1]:

«Նռան գույնը» կինոնկարի վրա Հ. Կարալյանի աշխատանքային օրերի մասին իր հուշերում նրա դուստրը գրում է. «Բոլոր խոսակցությունները, սցենարի տարբերակները, էսքիզները, կասկածներն այնքան էին մտել իմ կյանք, որ «Նռան գույնը» մինչև այժմ, դա երկու Մեծերի փոխհարաբերությունների ինչ-որ մեծ օրագիր է, որոնց հաղորդակցության վկան եմ եղել ես»[2]:

Ժամանակակից կինոարվեստի համաշխարհային դեմքերի կողքին Ս. Փարաջանովի անունը բացառիկ ու բացարձակ տաղանդի խորհրդանիշ է: Ֆրանսիական քննադատներից մեկը «Կարմիր նժույգներ» («Մոռացված նախնիների ստվերները») կինոնկարի կապակցությամբ ասում է. «Սա ոչ Ֆելինի է, ոչ Ռոսելինի և ոչ Գոդար, սա Փարաջանյան է...»[3]:

Արվեստում գտնել սեփականը, սեփական մտքերի ու հույզերի բացահայտման եղանակները, վերարտադրման սեփական տեսակետներն ու միջոցները՝ ահա Փարաջանյանի և Կարալյանի հաղթանակը նախ իրենց և ապա հնամենի դոգմաներին գերի համառների նկատմամբ:

Ս. Փարաջանովի «Սայաթ-Նովա»՝ «Նռան գույնը», բավականին բարդ ֆիլմի վրա աշխատել են նաև նկարիչներ Ս. Անդրանիկյանը, Ե. Ախվլեդիանին, Մ. Առաքելյանը, Հ. Կարալյանը և Ժ. Սարաբյանը: Հ. Կարալյանին աշխատանքներում ներգրավվել է հենց ինքը՝ Ս. Փարաջանովը, ով ոչ անհիմն կերպով համարում էր, որ թիֆլիսյան կոլորիտը ոչ ոք նրանից լավ չի իմանա...[4] Եվ նա չէր սխալվում: «Համաձայն Հ. Կարալյանի և «Հայֆիլմի» միջև կնքված տիպային պայմանագրի առաջին կետի՝ նկարչին էր հանձնարարվում կինոնկարի հագուստների ձևավորման ամբողջ աշխատանքը: Երկրորդ կետը Հ. Կարալյանին պարտավորեցնում էր կինոօպերատորի, դեկորացիաների բեմադրող-նկարչի և բեմադրող-ռեժիսորի հետ համատեղ որոշել կինոնկարի ընդհանուր ոճը (այդ ամենը հենց Փարաջանովի ներկայության դեպքում)՝ նկատի ունենալով թեմայի առավել ճեռնտու (խնայողական) լուծումը: Եվ, վերջապես, Հ. Կարալյանը ռեժիսորի, նկարչի և ստուդիայի տնօրենի հետ համատեղ, ըստ արձանագրության, ստուդիայի համապատասխան արտադրամասերից պետք է ընդուներ պատրաստի զգեստները, կոշիկները, գլխարկները, գլխի ծածկոցները և պաճուճանքները»[5]:

---

[1] Հովսեփ Կարալյանի անձնական արխիվ:

[2] Каралян Б., Прекрасное соседствует с добротой. Из записок об отце, элитарная газета “Новое время”, Вып. 7 (151), Ер. 31.07.2007, с. 10:

[3] Ալագյոզյան Գ., Սա Փարաջանյանն է, «Սովետական Հայաստան», Եր., 06.08.1967:

[4] Микаэлян К., Мир Иосифа Караляна, «Новое Время», № 1804, Ер., 12.11.2009, с. 8. ՀԱՊ հուշաձեռագրային բաժին, Ֆ-76, Ի-30240: Микаэлян К., Маэстро, Иосиф и «Саят-Нова», «Новое время», 27.07.2010.

[5] Микаэлян К., Маэстро, Иосиф Каралян и «Саят-Нова», «Новое время», № 1602, Ер., 26 апреля 2008, с. 8.

Փարաջանովը գտնում էր, որ միայն վրացական արմատներով մարդը, ինչպիսին Կարալյանն էր, կարող է հասկանալ և հավաստիորեն արտացոլել այն երևույթի ոգին, որը նա ցանկանում էր հաղորդել իր ֆիլմում: Հետևաբար, նկարիչը Փարաջանովին գրավում էր որպես թիֆլիսեցի, որպես քաղաքի առանձնահատուկ ոգու, կոլորիտի կրող: Կարալյանի ստեղծագործությունն իր մեջ ամփոփում էր Վրաստանի մասին հիշողություններն ու տպավորությունները[1]:

Կարալյանն հիանալի գիտեր Թիֆլիսը ոչ միայն այն բանի համար, որ ծնվել և երկար տարիներ ապրել է այդ քաղաքում, այլև այն պատճառով, որ նրա երկրորդ «ես»-ը՝ գրեթե ամբողջ գեղանկարչությունը, նվիրված է Թիֆլիսի և նրա բնակիչների մասին հիշողություններին: Քաղաքի և նրա կենցաղի բանաստեղծականացված ոչ մեծ նկարները՝ գեղեցիկ ու հիանալի գեղանկարչության հայրենաբաղձական թանձրուկները չափազանց սրտագին են, անկեղծ, նուրբ ու ջերմ: Կարալյանի նկարների որոշ հերոսներ հայտնի չափով փոխակերպվել են «Սայաթ-Նովա» ֆիլմի կերպարների: Փարաջանովյան ֆիլմի համար նա արել է 60-ից ավելի էսքիզներ[2]: Դրանք ֆիլմի գլխավոր կերպարների, ինչպես նաև ռազմիկների, շինարարների, վանականների ու միանձնուհիների վարպետորեն մշակված կոստյումներն են (զգեստները): Չնայած այն բանին, որ որոշ էսքիզներ իրենց բնագիր տարբերակով չեն ներառվել ֆիլմում, բայց դրանց պլաստիկան և կերպարների ընդհանուր տրամադրությունը ստեղծել են այն միջավայրը, որում ապրում ու գործում են «Նռան գույնը» ֆիլմի հերոսները[3]: Էսքիզների մի մասը էկրանավորվել է, որոշ մասը նմանվել է Փարաջանովի մտահղվածներին, ինչը պակաս կարևոր չէ: Դրանցից են «Սիգարշավող ձիավորները», «Սանահինի վանականը», «Սայաթ-Նովան Սանահինում», «Դարերով փակված Ղազար Կաթողիկոսը», «Հրեշտակները», «Որմնանկարի վարպետ-վանականը», «Գեղջկուհի հայուհին», «Գյուղացի վարպետը», «Ղարաբաղցի տղան», «Ղարաբաղցին», «Հին թիֆլիսուհին», «Քուրդը», «Թիֆլիսեցի տղան»... Բոլորը նկարված են 1967-ին՝ գուաշով և տեմպերայով[4]: Անկասկած Սերգեյ Փարաջանովը գնահատում էր իր թիֆլիսեցի ընկերոջը: Կարալյանն այնպիսի նկարիչ է, ով կենտրոնանում է զգացմունքների բանաստեղծական մեղմ ռեգիստրի վրա: Այդպիսին է վարպետը հենց Ս. Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի համար արված ակվարիելների (ջրանկարների) մի ամբողջ շարքում: Հետաքրքրական է ոչ միայն կերպարների պլաստիկան, այլև այդ ջրանկարների բարեհնչյունությունն ու աշխարհազգացողության հիմքը: Վարպետն ընտրում է ճիշտ կողմնորոշիչներ և գրեթե ընդհուպ մոտենում ռեժիսորի մտահղացմանը: Փարաջանովը որոշ իմաստով օգտվել է ջրանկարների պլաստիկայի՝ Կարալյանի ընդհանուր ըմբռնողությունից,

---

[1] Տե՛ս Каралян Б., Прекрасное соседствует с добротой. Из записок об отце, элитарная газета “Новое время”, Вып. 7 (151), Ер. 31.07.2007, с. 10.; Карапетян И., Цвет граната в эскизах, еженедельник “Эфир”, № 19, Ер., 8 мая 2008, с. 12:

[2] Տե՛ս Аргутян М., Темпера цвета граната, журнал “Жам”, 2009, с. 85:

[3] Տե՛ս Затикян М., Экспозиция, объединившая два таланта, «Голос Армении», 24 апреля 2008, с. 7. ՀԱՊ հուշաձեռագրային բաժին, Ֆ-76, Ի-28454:

[4] Տե՛ս Карапетян И., Цвет граната в эскизах, еженедельник “Эфир”, № 19, Ер., 8 мая 2008, с. 12:

բայց ամբողջ ֆիլմի կերպարային շարքը, աշխարհընկալումն ու ձևակերպարային ուղղությունը բացարձակապես այլ են[1]:

Կարալյանի ստեղծած Սայաթ-Նովայի, ռազմիկների, գյուղացիների, եկեղեցականների, հրեշտակների կերպարները գունեղ են, արտահայտիչ, հոյակերտ (մոնումենտալ), բայց նաև ծայրահեղ պարզ: Էսքիզների վրա աշխատելիս Կարալյանը շեշտադրել է ֆիլմի կերպարներին բնորոշ սիմվոլիկան, շարժումները, ժեստերը՝ ստեղծելով գեղանկարչական և միաժամանակ դինամիկ տիպաժներ (տիպային առանձնահատկություններ): Դրա հետ մեկտեղ նրա էսքիզները ներդաշնակվում են Ս. Փարաջանովի հատուկ մտածողությանը, որի շնորհիվ էլ վերջինս ձեռք բերեց ականավոր ստեղծագործողի հռչակ: Զուր չէ, որ ֆիլմի նկարահանումների ավարտից հետո Հ. Կարալյանի դստեր կողմից հնչեցված «Իսկ ինչպիսի՞ն է Փարաջանովը» հարցին վարպետը պատասխանել է՝ «Նա պարզապես հանճար է»[2]:

Ս. Փարաջանովը շատ է հավանել էսքիզները: Այդ մասին Երևանում կայացած նկարչի էսքիզների ցուցադրության ժամանակ ասել է Փարաջանովի ֆիլմերի օպերատոր Ալբերտ Յավուրյանը. «Նայելով էսքիզները, ես շշմել էի: Ես հասկացա, որ Կարալյանը մեկն է այն քչերից, ով աշխատելով Փարաջանովի հետ, նրան է փոխանցել իր «Ես»-ի մի մասնիկը»[3]:

Կարալյանի արխիվում բացի էսքիզներից պահպանվել են բազմաթիվ թանկագին հազվագյուտ իրեր՝ ուրվանկարներով ալբոմներ, լուսանկարներ, փաստաթղթեր, կինոֆիլմում օգտագործված երկու բնօրինակ զգեստներ և գլխավորը՝ գրեթե 70 վերարտադրանկարներ[4]:

Ֆիլմը էկրաններին հայտնվեց 1969-ին, բայց ոչ թե «Սայաթ-Նովա», այլ «Նռան գույնը» անունով: Ֆիլմի «վանական անունից», մեղմ ասած, վախեցան հատկապես նրանք, որոնցից կախված էր ֆիլմի ապագան: Բայց և այնպես այն միանգամից դասվեց աշխարհի լավագույն ֆիլմերի շարքը, և այդպիսին էլ մնում է առ այսօր:

Ս. Փարաջանովի արվեստը բացառիկ է, իսկ նրա ստեղծագործությունը՝ մի առանձնահատուկ աշխարհ: Նրա ֆիլմի համար էսքիզներ պատրաստելը հեշտ գործ չէր, և ոչ յուրաքանչյուր նկարչի ուժերին էր համապատասխան[5]:

«Հեռանալով ողորկ սյուժետային գիծ ունենալու հավանականությունից, «Սայաթ-Նովա» կինոնկարում Փարաջանյանը ձգտում է սեփական իսկ սցենարի հիմքում տեսնել երգիչ-պոետի կյանքի երեք փուլերը՝ մանկություն, պատանեկություն, հասունություն, ուր մեկ ընդհանրացումների, մեկ խորհրդանշական խտացումների, սյուժետային շեղումների միջոցով ներկայացնել կերպարի աստիճանական զարգացումը: Կինոնկարը, ունենալով Սայաթ-Նովայի կյանքի փաստական պատառիկներ,

---

[1] Տե՛ս Каралова И., Мир Караляна, Ер.: «Иравунк», 2009, с. 9-10:

[2] Затикян М., Экспозиция, объединившая два таланта, «Голос Армении», 24 апреля 2008, с. 7. ՀԱՊ հուշաձեռագրային բաժին, Ֆ-76, Ի-28454:

[3] Аргутян М., Темпера цвета граната, журнал “Жам”, 2009, с. 85:

[4] Микаэлян К., Мир Иосифа Караляна, «Новое Время», № 1804, Ер., 12.11.2009, с. 8. ՀԱՊ հուշաձեռագրային բաժին, Ֆ-76, Ի-30240:

[5] Տե՛ս Карапетян И., Цвет граната в эскизах, еженедельник “Эфир”, № 19, Ер., 8 мая 2008, с. 12.

յուրօրինակ, բանաստեղծական կինոերկ է, որի գեղագիտական արժանիքներն ու գաղափարական հարստությունը վեր են ամեն մի ավանդական, Սայաթ-Նովայի շուրջ ստեղծված նախապաշարումներից: Իսկ փարաջանյանական արտահայտչաձևերը գեղանկարչի լեզուն է՝ մոնումենտալ լուծումներով:

Փարաջանյանական ամեն մի կադրը կոմպոզիցիոն, մասշտաբային կտավ է հիշեցնում, որը ծնում է գաղափարական ու հոգեբանական զուգորդություններ, ուր գծանկարը լակոնիկ է, դինամիկ՝ ներքին լարումով և տեմպի վեհաշուք հանդիսավորությամբ: Իսկ նրա խոսակցության ամենասիրելի նյութը ազգագրությունն էր, ամենասիրելի աշխատանքը՝ ազգային գոհարների ուսումնասիրումը: Նա հիանալի նկարիչ է, ունի ուրույն, մակերևութապատկեր (ռելիեֆ գծանկար), գիտե տեխնիկան, գույնի արժանիքներն ու տեղը, զբաղվել է խճանկարով: Նրա բուռն ու հորդաբուխ երևակայության մեջ ամեն մի իր, ամեն մի ֆակտուրային առանձնահատկություն հեքիաթային բովանդակություն ու թովչանք է ստանում»[1]:

Գույնի զգացողության մշակույթը, ազնիվ ու բյուրեղյա կոլորիտը, կոմպոզիցիոն թարմ մտածողությունը երկու վարպետների երջանիկ զուգակցումն է: Նրանք մանկական հրճվանքով ու հիացմունքով էին ընկալում ցանկացած տաղանդավոր ստեղծագործություն, ցանկացած նորահայտ տաղանդի մուտքը մշակութային կյանք:

Այսպիսով, Ս. Փարաջանովի և Հ. Կարալյանի համագործակցությունը ծնեց «Հայֆիլմ»-ում նկարահանած անկրկնելի «Նռան գույնը» (1969) կինոնկարը: Տեքստ, որպես այդպիսին, չկա, իսկ գաղափարները մատուցվում են ճաշակով կառուցված բնապատկերների, նատյուրմորտերի, ժանրային դրվագների միջոցով: Անպատմելի կերպարներ, շարժումներ, հագուստներ՝ պարզապես անհնար է թվարկել այն ամենը, ինչը մարմնավորում է այդ գլուխգործոցը[2]:

Ֆիլմը մեկ անգամ ևս հաստատեց Փարաջանովի արվեստի յուրօրինակությունը և մեծ համբավ բերեց ռեժիսորին: Նրա ստեղծագործությանը բնորոշ է սերը ժողովրդական արվեստի, բանահյուսության, ժողովրդի անցյալն ու ներկան սնող մշակույթի ակունքների նկատմամբ, վառ պատկերայնությունը, գեղանկարչական մեծ ճաշակը, վավերագրական հավաստիությունը, մտքի փիլիսոփայական խորությունը[3]:

Հ. Կարալյանին երախտապարտ լինելով՝ Ս. Փարաջանովը փորձում էր Թիֆլիսում գտնվող Ելենա Ախվլեդիանիի արվեստանոցում կազմակերպել նկարչի աշխատանքների ցուցահանդես, սակայն Կարալյանն անսպասելի հիվանդանում է, և ցուցահանդեսն այդպես էլ չի կայանում: Բայց նկարչի հանդեպ Փարաջանովի ջերմ վերաբերմունքը մնում է, ինչի մասին վկայում է Նովոսիբիրսկում Կարալյանի ցուցահանդեսի բացման առթիվ անվանի ռեժիսորի վարպետին ուղարկած շնորհավորական հեռագիրը[4]: «Այնուամենայնիվ «Նռան գույնը» կինոնկարի համար

---

[1] Ալագյոզյան Գ., Սա Փարաջանյանն է, «Սովետական Հայաստան», Եր., 06.08.1967:

[2] Տե՛ս Карапетян И., Цвет граната в эскизах, еженедельник “Эфир”, № 19, Ер., 8 мая 2008, с. 12:

[3] Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, տիեզերո-Ֆուքսին, Եր., 1986, էջ 314:

[4] Տե՛ս Затикян М., Экспозиция, объединившая два таланта, «Голос Армении», 24 апреля 2008, т. 7. ՀԱՊ հուշաձեռագրային բաժին, Ֆ-76, Ի-28454:

արված Կարալյանի էսքիզների ցուցահանդեսը կայանում է: Բայց դա տեղի է ունենում շատ տարիներ անց, ցրտի և մթության տարիներին, երբ ո՛չ Կարալյանը, ո՛չ էլ Փարաջանովը արդեն ողջ չէին»[1]:

Մարինե Մինասյան, Արվեստագետներ Հովսեփ Կարալյանի և Սերգեյ Փարաջանովի մտերմության հիմքերը – Հոդվածում ներկայացված են փաստեր ու հիմնավորումներ, որոնք կիսաբաց են անում երկու հռչակավոր արվեստագետների կյանքի էջերից մեկի վարագույրը և բացահայտում այդ ոչ հասարակ, տաղանդավոր մարդկանց՝ Հովսեփ Կարալյան (Իոսիֆ Կարալով) նկարչի և Սերգեյ Փարաջանով (Սարգիս Փարաջանյան) կինոռեժիսորի ընկերության պատճառները: Իսկ Կարալյանի և Փարաջանովի ստեղծագործության գենետիկ ակունքները գնում են Արևելքի այն հզոր մշակույթի խորքերը, որը միավորում էր հայկական, պարսկական և վրացական մշակույթները:

Марине Минасян, Основы привязанности деятелей искусства Овсепа Караляна и Сергея Параджанова – В статье представлены факты и обоснования, которые приоткрывают завесу над одной из страниц жизни двух знаменитых деятелей исскуств и расскрывают причины удивительной дружбы этих неординарных, талантливых людей: художника Овсепа Караляна (Иосифа Каралова) и кинорежиссера Сергея Параджанова (Саркиса Параджаняна). А генетические истоки творчества Караляна и Параджанова уходят в глубины великой культуры Востока, объединяющей армянскую, грузинскую и персидскую культуры.

Marine Minasyan, The bases of friendship between the artists Hovsep Karalyan and Sergey Parajanov – The article presents facts and evidence that shed light on a page from the lives of the two famous artists, and reveal the reasons for the amazing friendship of these extraordinary, talented people: the artist Hovsep Karalyan (Joseph Karalov) and the filmmaker Sergei Parajanov (Sarkis Parajanyan). The genetic background of Karalyan's and Parajanov's art goes back to the great culture of the East, uniting the Armenian, Georgian and Persian cultures.

Մարինե Մինասյան – ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի հայցորդ

[1] Каралян Б., Прекрасное соседствует с добротой. Из записок об отце, элитарная газета “Новое время”, Вып. 7 (151), Ер. 31.07.2007, с. 10.